մի նոր յղացումն է անկախ ձևակերպութեամբ։ Այս մանրանկարը մեզ համար արժէք ունի այլ և այլ կողմերով՝ ժողովրդական կենցաղի, տարազի եւ ճարտարապետութեան. Յիսուսի ընդունելութեան՝ նկարիչը տուել է տեղական–կենցաղական բնոյթ, նմանեցնելով մի բարձրաստիճան անձի կամ թագաւորի ընդունելութեան, ժողովրդի այլ և այլ դասերի եւ սեռերի ներկայացուցիչները հանելով պատշգամբներն ու կտուրները, ծառերի վերայ, պահպանելով միայն աւետարա-

(Պատկեր 14)

նական պատմութեան որոշ տուեալները, հանդերձների փռելը, իշի վերայ նստելը, ձիթենու ճիւղերը, որի մասին նկարիչը հաւանօրէն գաղափար չունէր։ Ապա վերին աստիճանի հետաքրքրական է, որ ժողովրդական դասերի և սեռերի ներկայացուցիչներին զգեստաւորել է համապատասխան իրական կեանքին, առատ նիւթ տալով հայ ժամանակակից տարազի պատմութեան։ Այստեղ մենք տեսնում ենք բարձր դասի ծերունի ներկայացուցիչը իւր զարդարուն ապարոշով, փաթթոցի ծայրերը կախուած կողքից, և ծաղկաւոր վերնագլխոցով, համեմատելի Գագիկ Ա.ի արձանին Անիում (պատկ. 14), Սմբատ Բ.ի և Գուրգէնի բարձրաքանդակին Հաղբատի տաճարի արևելեան պատին, Կիւրիկէ եւ Սմբատ թագաւորների բարձրաքանդակներին Սանահնի տաճարի արևելեան ճակատին (պատկ. 15), բայց առաւել նման Աւշինի որդի Հեթում Սեւաստոսի բժշկարանի մագաղաթ պահպանակների բժիշկների հագուստին(*)։ Կանանց, նրանց հետ խօսող երիտասարդի, ինչպէս և Շերենիկի տարազների նմանութիւնները մատնանշել ենք վերև (Պրակ Ե. և Դ.). կացնով ձիթենու ճիւղ կտրող պատանիները հասարակ դասի ներկայացուցիչներն են, հագուստներն էլ համապատասխան իրենց ծագման. կարճ բաճկոնակի մէջքն ու կուրծքը թեթև զարդարուն, նեղ անդրավարտիկի փոխանցքները նոյնպէս թեթեւ զարդարուն (պատկ. 3)։

Ոչ պակաս հետաքրքրական է մեր ճարտարապետական արուեստի պատմութեան համար Երուսաղէմի տաճարը ներկայացնող շէնքը. նախ դարպասը իւր վերնայարկ, վանդակազարդ պատշգամբով, ուր երիտասարդի հետ խօսող երկու աղջիկներն են կանգնած, բայց առաւելապէս կրկնայարկ և ազատ սիւների վերայ հանգչող գմբեթով վերջաւորուած եկեղեցին։ Շէնքը երկու տեսակէտով գրաւում է մեր ուշադրութիւնը. նախ իւր ազատ սիւների վերայ հանգչող գմբեթով, որ աւելի հին է, քան մեր ճարտարապետութեան մէջ նման երեւոյթների իրական յայտնի մնացորդներն են, ինչպէս Յոհաննայ վանքի կամ Հաղբատի Համազասպաշէն զանգակատները։ Մանրանկարչութեան մէջ միայն ունինք մի երկրորդ աւելի հնագոյն երևոյթ, քան Հաղբատի աւետարանն է, Շինոցի աւետարանի մէջ ՆՁԷ = 1038 թուականից, որ դարձեալ Յիսուսի մուտքն է Երուսաղէմ։ Աւետարանն այժմ գտնուում է Էջմիածնի պետական մատենադարանում և մէկն է մեր մանրանկարչական արուեստի

(*) Երուս. Հայոց մատ. N 370 բժշկարան։ Գունազարդ արտանկարութիւնը կը տպագրուի մեր մանրանկարչական գործում։